

## ՀԱՅՈՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

### ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ

Հայոց կրոնական վարքագծի փոփոխությունները հանգամանալից քննարկվել են հասարակական-քաղաքական տարբեր համակարգեր ընդգրկող ավելի քան քառորդ դարի ժամանակահատվածում<sup>1</sup>: Այս առումով հատկապես կարևորում ենք Տավուշի գյուղերում, ինչպես նաև Իջևան<sup>2</sup> և Կապան<sup>3</sup> քաղաքներում իրականացրած համեմատական հետազոտությունները, որոնց վերլուծությունները ցույց տվեցին, որ խորհրդային<sup>4</sup> համեմատ 21-րդ դարասկզբին նկատվում է հավատքի աճ: Հատկապես ակնհայտ են այդ փոփոխությունները և՛ հավատի կտրուկ աճի (չուրջ 3 անգամ) և՛ անհավատների խիստ կրճատման (ավելի քան 25 անգամ) առումներով: Բացի այդ, նկատելիորեն ընկել էր հավատքի նկատմամբ ակտիվ մերժողական դիրքորոշում ունեցողների վարկանիշը, չնայած այն հանգամանքին, որ այն ցածր էր նաև խորհրդային վերջին շրջանում:

Եկեղեցի այցելության զրդապատճառների համալիր վերլուծությունը ևս հնարավորություն տվեց կատարելու որոշակի եզրահանգումներ բնակչության կրոնական վարքագծի և, որ շատ կարևորում ենք՝ այդ համակարգում տեղի ունեցած փոփոխությունների հիմնական ուղղությունների կամ միտումների վերաբերյալ: Նախ՝ խորհրդային համեմատ, հետխորհրդային

<sup>1</sup> Հետազոտության առաջին փուլն ընդգրկում է խորհրդային վերջին շրջանը (1976/1980 թթ), իսկ երկրորդը՝ 21-րդ դարասկզբը (2007- 2010 թթ.):

<sup>2</sup> Ուշագրավ է, որ հավատացյալները և անհավատացյալները Տավուշի գյուղերում, եթե 1980 թ. տվյալներով՝ 36,0% և 34,0% էր, ապա 2007-ին կազմում էր՝ 34,0% և 6,7% էր: Այսինքն տեղի ունեցավ հավատացյալների (ավելի ճիշտ՝ իրենց հավատացյալ համարողների) շուրջ 44% աճ: Խորհրդային համեմատ, 21-րդ դարասկզբին մերժողական դիրքորոշում ունեցողները կրճատվել էին՝ 5, իսկ տատանվողները՝ կրկնակի անգամ: Նմանատիպ փոփոխություններ կատարվեցին նաև Իջևանցիների կրոնական վարքագծում (տես *Ս. Սկրտչյան*, Վարդավառի էթնոմշակութային և սոցիալական առանձնահատկությունները Տավուշում, Երևան, 2007, էջ 206):

<sup>3</sup> Կապանցիների կրոնական վարքագծում կատարված փոփոխություններն առավել ակնառու էին. հավատացյալները և կրոնը ժխտողները 1980-ին կազմում էին 27,0% և 51,0%, իսկ 2009-ին՝ 81,6% և 2,0% (տես *Ս. Սկրտչյան*, ԴԱՆ / դաշտային ազգագրական նյութ/, Կապան, 2009 թ.):

<sup>4</sup> Հանրապետության մասշտաբով 1980-ականներին հավատացյալների ընդհանուր թիվը կազմում էր 41% և, ընդ որում, այն նկատելի առավելություն ուներ գյուղում (գյուղ՝ 49%, քաղաք՝ 33%) և մասնավորապես գյուղաբնակ կամայն շրջանում՝ 52%: Հավատքի առումով՝ տատանվողները, անհավատներն ու նրա դեմ ակտիվ պայքարողները կազմում էին համապատասխանաբար՝ 20%, 34%, 5%:

չըջանում ավելի քան 3 անգամ նվազել են եկեղեցիներ չայցելողները (54%-17,3%): Խորհրդային շրջանում գրեթե նույն պատկերն էր նաև Իջև-վանում, ուր բնակչության շուրջ կեսը ժխտողական վերաբերմունք ուներ եկեղեցու նկատմամբ<sup>1</sup>:

Նվազել է ժամանցային բովանդակությամբ գործոնների հարաբերակ-ցությունը (49,1% - 4,2%):

Հետխորհրդային շրջանում կտրուկ աճ է նկատվում տոնածիսական բնույթի դրդապատճառներում (38,2% - 61,3%): Եթե խորհրդայինում գե-րակայողը՝ մատաղի և ուխտի բաղադրիչներն են (23,6%), ապա 21-րդ դա-րասկզբին՝ գլխավոր մոտիվը մոմավառության սովորույթն է (36,7%), որի մասշտաբները նախկինի համեմատ ընդլայնվել են ավելի քան 5 անգամ:

Եկեղեցի տանող զուտ կրոնական բնույթի դրդապատճառների նշա-նակությունը կրկնակի է աճել (8,8% - 15,9%):

Ընդհանուր առմամբ, նկատվում էր կրոնական (այդ թվում՝ տոնածի-սական) բնույթի մոտիվների վերընթաց աճ (47% - 77,2% ):

Եկեղեցի տանող շարժառիթների համալիրում շուրջ 6 անգամ մեծացել էին հուսահատության և վերջինիս սերտորեն առնչվող՝ երջանկություն և առողջություն ակնկալող հիմնախնդիրները (2,5%-16,6% ), ուր գերակայո-ղը՝ առողջական բնույթի դրդապատճառներն են: Մասնակի միտում է նկատվում նաև քրիստոնեական սրբավայրը՝ էթնիկ ինքնության խորհր-դանշի ընկալման համատեքստում<sup>2</sup>:

Խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջաններում հավատքի դրսևորման տարիքային, սեռային և կրթական տեսանկյուններով կատար-ված հետազոտություններն ամբողջական պատկերացում են տալիս հայոց կրոնական վարքագծում տեղի ունեցած փոփոխությունների և զարգաց-ման միտումների վերաբերյալ.

Տարիքային առումով որակապես է փոխվել հայոց կրոնական վարքա-գիծը:

Խորհրդային շրջանում հավատքի հիմնական կրողը տարեցներն էին, իսկ 21-րդ դարասկզբին ընդգծված կրոնական վարքագիծ ունեն երիտա-

<sup>1</sup> Խորհրդային շրջանում բնակչության նկատելի հատվածը (39%) ընդհանրապես չէր այցելում եկե-ղեցի: Ընդ որում, չայցելողների այդ համալիրում առավել պասիվ շերտը՝ քաղաքաբնակներն էին, իսկ սեռային առումով՝ տղամարդիկ (տես՝ Ս. Սկրտչյան, Տավուշցիների տոնական և կրոնական վարքագծի փոփոխությունները խորհրդային և հետխորհրդային համակարգերի համատեքստում, Տավուշ, նյութական և հոգևոր ժառանգություն, Երևան, 2009, էջ 171-172):

<sup>2</sup> Առողջության և հուսահատության մոտիվները գերակայում էին հատկապես մոմավառության հա-մատեքստում, որի աճը պայմանավորված էր կենսամակարդակի կտրուկ անկման և վերջինիս հետ կապված դեպրեսային իրավիճակով: Հուսահատությունը իր հետ բերեց կրոնական հավատքի խո-րացում, որը դրսևորվեց մասնավորապես ծեսերում (տես՝ Ս. Սկրտչյան, նշվ. աշխ., էջ 174):

սարգ և մասամբ՝ միջին սերունդը: Այդ երևույթը հստակ երևում է կրոնական վարքագծի տարբեր տեսանկյուններով կատարված հետազոտություններում (կրոնի նկատմամբ ընդհանրական վերաբերմունք, հավատացյալի դավանաբանական ուղղվածություն, հավատքի ձևավորման տարիք, եկեղեցի այցելության հաճախականություն և այլն):

Կրոնական վարքագծի տարիքային բնութագրի փոփոխությունները խորհրդային և հետխորհրդային համակարգերում հետևյալ պատկերն ունի.

1. Հավատքի վարքագիծը երիտասարդության շրջանում աճել է շուրջ 4 անգամ (6,8% - 24,4%):
2. Միջին սերնդի կրոնական վարքագիծն աճել է 2,5 անգամ (12% - 30,5%):
3. Տարեցների կրոնական վարքագիծը մասնակի է աճել (13,6% - 15,2%):
4. Հավատքի նկատմամբ ժխտողական վերաբերմունքը երիտասարդների շրջանում նվազել է 5 (16,3% - 3,1 %), իսկ միջին սերնդի մոտ՝ 3 անգամ (20,8% - 6,7%): Այս առումով անկման տեմպերը համեմատաբար փոքր են տարեցների վարքագծում՝ 2,2 անգամ (9,7% - 4,3 %):
5. Կրոնի նկատմամբ ակտիվ մերժողական վերաբերմունքը ցածր էր թե՛ խորհրդային, և թե՛ հետխորհրդային շրջանում (ընդհանուր առմամբ՝ շուրջ 0,6 %), որը մասնակի առավելություն ունեւր խորհրդային միջին սերնդի վարքագծում (1,6%):
6. Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների տեսակետից, 21-րդ դարասկզբին առանձնանում է միջին (23,7%) և երիտասարդ սերունդը (19,3%): Տարեցների դիրքորոշումն այս հարցում բավականին ցածր էր (7,4%):
7. Հայ Ավետարանական եկեղեցուն հարողների տեսակետից, չնայած տարածման ցածր մասշտաբներին, առանձնանում է միջին (3,7%) և երիտասարդ (3,0%) սերունդը:
8. Հավատքի ձևավորման տարիքային սահմանի տեսանկյունից ամենատարածվածը՝ կրտսերն է (մինչև 29 տարեկան՝ 58,4%): Այս առումով մյուս գլխավոր մոտիվացիան՝ «ի ծնե» հավատացյալ քրիստոնյայի ընկալումն է (28,3%): Ի դեպ, չնայած կապանցիների մոտ ի ծնե հավատացյալ քրիստոնյայի ընկալումը երկրորդական պլան է մղված (5,2%), այստեղ գլխավորապես երիտասարդ տարիքային այդ շրջանն է համարվում հավատքի ձևավորման ժամկետը՝ պատանեկության ընդգրծված առավելությամբ (մինչև 29 տարեկան՝ 78,5%, այդ թվում, մինչև 17 տարեկան՝ 62,3%):
9. Եկեղեցի այցելության հաճախականության առումով ամենաակտիվը՝ կրտսեր (13,1%) և հատկապես՝ միջին սերունդն (18,1%) է: Բնականա-

բար՝ սրբավայրեր չայցելողների համալիրում նրանք ամենափոքրածավալ տարիքային խմբերն են (1,9%):

Ձուտ հավատքին առնչվող տարիքային ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները գրեթե ոչնչով չեն տարբերվում տոնական վարքագծում կատարված որակական տեղաշարժերից: Թե՛ կրոնական, և թե՛ տոնական վարքագծերում կատարված փոփոխություններն ունեն միևնույն մոտիվացիան:

Կրոնական վարքագծի տարիքային բնութագրի փոփոխությունները պայմանավորված են միմյանց սերտորեն փոխկապված գործոններով. նախ՝ համազգային զարթոնքով, որն առավելապես ունեն էթնոհոգեբանական-արժեքային երանգավորում, և որը բնութագրական էր 1980-ականների վերջերին և 1990-ականների սկզբներին:

Տարիքային առումով փոփոխությունները պայմանավորող թերևս ամենազլխավոր գործոնը՝ անկախ պետությունից գաղափարադաստիարակչական, կրթական քաղաքականությունն է, որը խորհրդային գաղափարախոսությունը հակընդդիմ, արժևորելով ազգային կրոնական ավանդույթները, կատարում է նոր հասարակարգին՝ նոր սերդի ինտեգրման գործառույթ:

Սեռային տեսանկյունից կրոնական վարքագծի փոփոխություններն ունեն մասնակի բնույթ: Տղամարդկանց համեմատ՝ կանայք հավատքի առումով նույնիսկ 21-րդ դարասկզբին պահպանել են ավանդական գերակայությունը: Այն նկատելի է հավատքը բնութագրող գրեթե բոլոր պարամետրերով՝ սկսած հավատքի ընդհանրական վարքագծից, ընդհուպ՝ եկեղեցի այցելության ղրդապատճառները:

1. Հավատացյալ կանանց թիվը մեծացել է շուրջ 2 անգամ (23,1% - 48,2%):
2. Տղամարդկանց կրոնական վարքագիծն աճել է 2,3 անգամ (9,4% - 22%):
3. Հավատի նկատմամբ ժխտողական վերաբերմունքը կանանց շրջանում նվազել է 4.5 (22,4% - 4,9 %), իսկ տղամարդկանց մոտ՝ շուրջ 3 անգամ (24,4% - 8,5 %):
4. Կրոնի նկատմամբ ակտիվ մերժողական վերաբերմունքը ցածր է թե՛ խորհրդային, և թե՛ հետխորհրդային շրջանում (կին՝ 1% - 1,2%, տղամարդ՝ 1,9% - 0,6%): Չնայած նվազագույն դրսևորումներին, այդ անկումը հստակ դիտարկվում է տղամարդկանց վարքագծում (ավելի քան 3 անգամ):
5. Հավատքի հարցում տատանվողների տեսանկյունից կանանց և տղամարդկանց վարքագիծը տարբեր է. կանանց մոտ այն մասնակի աճ ունի (8,8% - 10,4 %), իսկ տղամարդկանց շրջանում նվազել է կրկնակի անգամ (9,1% - 4,3 %):

6. Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների առումով 21-րդ դարասկզբին առանձնանում են կանայք (31,1%), որոնց տղամարդիկ (19,3%) զիջում են ավելի քան 2,5 անգամ: Ներկայում կանայք տղամարդկանց համեմատ ունեն կրկնակի առավելություն. կանայք՝ 36,5%, տղամարդիկ՝ 18,8 %:
7. Հայ Առաքելական եկեղեցուն հարողների տեսակետից, չնայած տարածման շատ ցածր մասշտաբներին, կանայք շուրջ 5 անգամ գերազանցում են տղամարդկանց (կանայք՝ 7,4%, տղամարդիկ՝ 1,5%):
8. Եկեղեցի այցելության հաճախականության առումով կանանց վարկանիշը շուրջ 3 անգամ մեծ է տղամարդկանցից (կանայք՝ 25%, տղամարդիկ՝ 8,8 %):
9. Սրբավայրեր չգնացողների տեսանկյունից կանայք կրկնակի առավելություն ունեն տղամարդկանց համեմատ (կանայք՝ 3,1%, տղամարդիկ՝ 6,3%):
10. Սրբավայրեր զնացողների ամենամեծ զանգվածը՝ հազվադեպ այցելողներն են: Այստեղ էլ կանայք կրկնակի ակտիվ են տղամարդկանց համեմատ (կանայք՝ 36,3 %, տղամարդիկ՝ 20,6%):

Կրթական առումով կատարվել է որակական փոփոխություն: Խորհրդային շրջանում կրոնական վարքագծի մասշտաբները վարից վեր համընկնում էին ամենացածրից մինչև ամենաբարձր կրթական մակարդակներին: Հետխորհրդային շրջանում արդեն իսկ նկատվում է հակառակ գործընթացը. որքան բարձր է կրթական մակարդակը, այնքան մեծ են կրոնական վարքագծի տարածման արեալները: Այդ երևույթը նկատելի էր կրոնական վարքագիծը բնութագրող գրեթե բոլոր չափորոշիչներով:

1. Խորհրդային շրջանում ամենաբարձր կրոնական վարքագիծ ունեին թերի միջնակարգ (19,8%) և միջնակարգ կրթություն ստացածները (8,4%), իսկ ամենացածրը՝ բարձրագույն (0,3%) և միջին մասնագիտական (3,9%) կրթություն ունեցողները:
2. 21-րդ դարասկզբին հավատքի հիմնական կրողներն ունեն բարձրագույն (36,9%) և միջին մասնագիտական (18,5%) կրթություն:
3. Եկեղեցի առավել հաճախ այցելողների առումով 21-րդ դարասկզբին առանձնանում են բարձրագույն կրթություն ունեցողները՝ 11%:

<sup>1</sup> Ուշագրավ է, որ այս հարցում խուսափողական դիրքորոշման (կամ՝ դժվարանալու) տեսակետից կանայք 2 անգամ գերազանցում են տղամարդկանց (կանայք՝ 9,6%, տղամարդիկ՝ 4,4 %): Կարծում ենք, որ այդ դիրքորոշումը հիմնականում պայմանավորված է իրենց աղանդավորական համայնքը չբացահայտելու հանգամանքով, ցամաքավանդ, որ դրանցում մեծ մասամբ կանայք են ներգրավված:

4. Քրիստոնեական սրբավայրեր թեպետ և ոչ հաճախ այցելող ամենամեծ հասարակական գանգվածի համալիրում ներկայում առաջնային վարկանիշ ունեն հետևյալ խմբերը. լրիվ միջնակարգ՝ 19%, բարձրագույն՝ 18%, միջին մասնագիտական՝ 18%, թերի միջնակարգ՝ 12%:
5. Ըստ կրթական մակարդակների, ներկայում սրբավայրեր ընդհանրապես չգնացողների համալիրում առանձնանում են միջին մասնագիտական (8%) և լրիվ միջնակարգ (6%) կրթություն ստացածները:
6. Հավատքի ձևավորման տարիքային բնութագրի տեսանկյունից ներկայում ամենատարածվածը՝ կրթական բարձր վարկանիշ ունեցողներն են. այդ թվում.

«ի ծնե» քրիստոնյա-հավատացյալ լինելու ընկալում. բարձրագույն՝ 11,4%, լրիվ միջնակարգ՝ 7,6%, միջին մասնագիտական՝ 3,8%:

Մանկապատանեկան շրջան. բարձրագույն՝ 11,4%, միջին մասնագիտական՝ 11,4%, լրիվ միջնակարգ՝ 7,6%:

Երիտասարդական շրջան. բարձրագույն՝ 7,6%, միջին մասնագիտական՝ 7,6%, լրիվ միջնակարգ՝ 6,3%:

Տարեցներն իրենց կրթական տարբեր մակարդակներով հանդերձ ներկայում ունեն ամենացածր կրոնական վարքագիծը՝ 7,7%: